

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2026-2027 ուս. տարվա գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

27 օգոստոսի 2026թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 20 անդամներից 15-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր — 2026» մրցույթին (նախկինում՝ «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր» մրցույթ) մանսակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի ասպիրանտների կողմից ներկայացված հայտերի քննարկման և երաշխավորման հարցը:

Զեկուցողներ՝

- Աննա Գրիգորյան
- Ռուբեն Իսրայելյան
- Մանե Թադևոսյան
- Սուսաննա Զումայան

2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար Ա. Դադայանին, ով ներկաներին հաղորդեց, որ ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարվել է «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր — 2026» մրցույթը, (նախկինում՝ «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր» մրցույթ) որին մանսակցելու և ֆինանսավորում ստանալու համար հայտ են ներկայացրել Ֆարմացիայի ինստիտուտի առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտներ Աննա Գրիգորյանը, Ռուբեն Իսրայելյանը, Մանե Թադևոսյանը և Սուսաննա Զումայանը:

Ելույթ ունեցավ՝ առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Աննա Գրիգորյանը, ով ներկայացրեց «Նոր ֆունկցիոնալացված էնանտիոմերապես հարստացված ոչ սպիրտակուցային α -ամինաթթուների ասիմետրիկ սինթեզ և վերջիններիս կենսաբանական հատկությունների ուսումնասիրություն» վերնագրով հայտը: Ներկայացվող հայտի նպատակն է նոր սերնդի ֆունկցիոնալացված (S)- α -ամինաթթուների ստացման արդյունավետ սինթեզի մեթոդների մշակումը և դրանց կենսաբանական ներուժի համակողմանի ուսումնասիրումը: Նախատեսվում է ստացված նոր միացությունների կառուցվածքային առանձնահատկությունների և կենսաբանական հատկությունների փոխկապակցված ուսումնասիրության միջոցով բացահայտել պոտենցիալ դեղաբանական ակտիվությամբ օժտված հեռանկարային միացություններ, ինչպես նաև նախանշել դրանց հետագա հետազոտման և զարգացման համար առավել նպատակահարմար սինթետիկ ուղիները:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել Աննա Գրիգորյանի կողմից ներկայացված «Նոր ֆունկցիոնալացված էնանտիոմերապես հարստացված ոչ սպիրտակուցային α -ամինաթթուների ասիմետրիկ սինթեզ և վերջիններիս կենսաբանական հատկությունների ուսումնասիրություն» վերնագրով հայտը՝ «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր -2026» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Ելույթ ունեցավ՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Ռուբեն Էդուարդի Իսրայելյանը և ներկայացրեց «Էնանտիոմերապես հարստացված β -տեղակալված α -ալանինի ածանցյալների և β -ամինոամիդների սինթեզի մեխանիզմի հաշվարկային ուսումնասիրություն և կենսաբանական գնահատում» վերնագրով հայտը: Հայտի նպատակն է մշակել նոր էնանտիոմերապես հարստացված β -տեղակալված (S)- α -ալանինի նմանակների և քիրալային β -ալանինի ամիդի ածանցյալների ասիմետրիկ սինթեզի մեթոդներ, ստանալ փորձնական նմուշներ և ուսումնասիրել դրանց կենսաբանական հատկությունները:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել Ռուբեն Իսրայելյանի կողմից ներկայացված «Էնանտիոմերապես հարստացված β -տեղակալված α -ալանինի ածանցյալների և β -ամինոամիդների սինթեզի մեխանիզմի հաշվարկային ուսումնասիրություն և կենսաբանական գնահատում» վերնագրով հայտը՝ «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր -2026» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Ելույթ ունեցավ՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի առկա անվճար ասպիրանտ Մանե Թադևոսյանը և ներկայացրեց «Ջերմակայուն կերատինազների կիրառման հեռանկարները թափոնների վերամշակման և կենսաբժշկագիտության մեջ» վերնագրով հայտը: Ներկայացվող աշխատանքի նպատակն է Հայաստանի երկրաջերմային աղբյուրներից և կերատինային թափոնների առաջացման հետ կապված միջավայրերից մեկուսացն

ել և բնութագրել թերմոֆիլ և թերմոտոլերանտ կերատինոլիտիկ մանրէները և դրանց կերատինազային համակարգերը, ուսումնասիրել կերատինային թափոնների կենսավերամշակման արդյունավետությունը և ստացված հիդրոլիզատների կենսաակտիվությունը: Մետազենոմային և կենսահինֆորմատիկ մոտեցումների կիրառմամբ նախատեսվում է բացահայտել նոր կերատինոլիտիկ մանրէներ և գեներ, հնարավոր ֆերմենտային համակարգեր՝ դրանց կենսատեխնոլոգիական, կենսաբժշկական և դեղագործական կիրառության պոտենցիալի գնահատման նպատակով:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել Մանե Թադևոսյանի կողմից ներկայացված «Ջերմակայուն կերատինազների կիրառման հեռանկարները թափոնների վերամշակման և կենսաբժշկագիտության մեջ» վերնագրով հայտը՝ «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր -2026» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

Ելույթ ունեցավ՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի առկա անվճար ասպիրանտ Սուսաննա Ջումայանը, ով ներկայացվեց «Հայաստանում տարածված անոթավոր սպորավոր որոշ դեղաբույսերի էնդոֆիտային միկրոբիոտայի բազմազանության և բույսերի կենսաբանական առանձնահատկությունների ձևավորման մեջ դրա դերի ուսումնասիրությունը» վերնագրով հայտը: Ներկայացվող աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Հայաստանի տարածքում տարածված որոշ անոթավոր սպորավոր դեղաբույսերի էնդոֆիտային միկրոբիոտայի կազմը, բազմազանությունն ու կենսաբանական հատկությունները, մեկուսացնել և նույնականացնել էնդոֆիտային միկրոօրգանիզմները, գնահատել դրանց հակամանրէային, հակահելմինթային և հակաօքսիդանտային ակտիվությունը և ուսումնասիրել կենսաակտիվ մետաբոլիտների հնարավոր ներուժը: Ակնկալվում է, որ արդյունքները կընդլայնեն Հայաստանի անոթավոր սպորավոր դեղաբույսերի էնդոֆիտային միկրոբիոտայի վերաբերյալ գիտելիքները և կնպաստեն կենսատեխնոլոգիական ու դեղագործական նշանակություն ունեցող նոր բնական կենսաակտիվ նյութերի բացահայտմանը:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել Սուսաննա Ջումայանի կողմից ներկայացված «Հայաստանում տարածված անոթավոր սպորավոր որոշ դեղաբույսերի էնդոֆիտային միկրոբիոտայի բազմազանության և բույսերի կենսաբանական առանձնահատկությունների ձևավորման մեջ դրա դերի ուսումնասիրությունը» վերնագրով հայտը՝ «Դոկտորական հետազոտությունների աջակցության ծրագիր - 2026» մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար:

2. Ընթացիկ հարցեր:

2.1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Էմմա Խաչատրյանի՝ «Մասնագիտական վերապատրաստում 2025» շրջանակներում Չեխիայի, Կառլի համալսարանի

Ֆարմացիայի ֆակուլտետ կատարած այցի վերաբերյալ հաշվետվության քննարկման և հաստատման հարցը:

Ելույթ ունեցավ՝ գիտական քարտուղար Անի Դադայանը, ով նշեց, որ Ֆարմաքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի առկա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Էմմա Խաչատրյանը 25PTS-1D009 ծածկագրով ծրագրի շրջանակներում գործուղվել է Չեխիայի Կառլի համալսարանի Ֆարմացիայի ֆակուլտետ՝ մասնագիտական վերապատրաստման նպատակով: Ելույթ ունեցավ նաև ասպիրանտ Էմմա Խաչատրյանը, ով համառոտ ներկայացրեց այցի շրջանակներում իրականացված գիտահետազոտական աշխատանքները, ձեռք բերված արդյունքները և պատասխանեց ներկաների հարցերին: Ելույթ ունեցան նաև գիտական խորհրդի անդամներ Հ. Փանոսյանը, Հ. Սիմոնյանը, Ա. Հովհաննիսյանը, ովքեր կարևորեցին նման ծրագրերի դերը հատկապես երիտասարդ կադրերի պատրաստման հարցում և առաջարկեցին հաստատել Էմմա Խաչատրյանի հաշվետվությունը՝ «Մասնագիտական վերապատրաստում 2025» շրջանակներում Չեխիայի Կառլի համալսարանի Ֆարմացիայի ֆակուլտետ կատարած այցի վերաբերյալ:

Որոշեցին՝ (միաձայն) հաստատել 25PTS-1D009 ծածկագրով ծրագրի «Մասնագիտական վերապատրաստում 2025» շրջանակներում ասպիրանտ Էմմա Խաչատրյանի հաշվետվությունը:

Գիտական խորհրդի նախագահ՝

ք.գ.թ., դոցենտ

Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

ք.գ.թ., դոցենտ

Ա. Դադայան